
**ՀՀ ԳԱԱ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
2009-2013 ԹԹ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ**

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը (այսուհետև՝ ՀՅԹԻ) 2009-2013 թթ. գիտական հանրությանն է ներկայացրել Հայոց ցեղասպանության պատմությանը նվիրված ավելի քան 20 հրատարակություններ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, որոնք ներառում են թե՛ գիտական ուսումնասիրություններ, թե՛ բացառիկ սկզբնաղբյուրների հրատարակություններ ու վերահրատարակություններ և թե՛ թարգմանություններ: ՀՅԹԻ-ն իր աշխատանքներն իրականացնում է տարբեր՝ «Վերապրողի հիշատակարան», «Դիվանագիտական արխիվ», «Ականատեսի վկայություններ» և այլ մատենաշարերով: Ստորև ներկայացնում ենք Հայոց ցեղասպանության ուսումնասիրության համար առավել կարևոր սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող աշխատությունները:

2009 թ. Կիլիկիայի կոտորածների 100-ամյակի առիթով ՀՅԹԻ-ն թողարկեց «Կիլիկյան մատենաշարը», որում վերահրատարակված՝ սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող գրքերը լույս են սփռում Օսմանյան կայսրությունում 1909 թ. հայկական կոտորածների դրվագների վրա: 2009 թ. պատմական գիտությունների դոկտոր Վարուժան Պողոսյանի աշխատասիրությամբ ֆրանսերեն վերահրատարակվեց Ժորժ Բրեզոլի «Այստեղից թուրքերն են անցել...» փաստաթղթերի ժողովածուն¹, որն առաջին անգամ լույս է տեսել Փարիզում 1911 թ. և ամփոփում է 1909 թ. կիլիկյան կոտորածների առնչվող բացառիկ վավերագրեր, վկայություններ ու լուսանկարներ: 2009 թ. վերահրատարակվեց նաև Ֆերիման Դաքետի՝ «Թրքական դաժանություն. Երիտթուրքերը և ճշմարտությունն Ադանայի Հոլոքոստի մասին. Փոքր Ասիա, 1909 թ. ապրիլ» մենագրությունը, ուր ներկայացված են Ադանայի նահանգում երիտթուրքերի կազմակերպած և իրականացրած՝ հայկական կոտորածների մանրամասները²: Սույն գիրքն առաջին անգամ հրատարակել է 1913 թ. Լոնդոնում և յուրահատուկ է նրանով, որ հեղինակն առաջիններից է, որը Հայոց ցեղասպանության առնչությամբ վերնագրում օգտագործվել է «հոլոքոստ» եզրույթը: «Կիլիկյան մատենաշարը» համալրած գրականության շարքում են նաև 2011 թ. Վ. Պողոսյանի վերահրատարակված՝ ազգությամբ հույն, ֆրանսիացի լրագրող Ալեքսանդր Ադոսիդեսի «Հայեր և երիտթուրքեր.

¹ Տե՛ս **Brézol G.**, Les Turcs ont passé là... Recueil de documents, dossiers, rapports, requêtes, protestations, suppliques et enquêtes établissant la vérité sur les massacres d'Adana en 1909, Erevan, 2009:

² Turkish Atrocities. The Young Turks and the Truth about the Holocaust at Adana, in Asia Minor, during April, 1909. Written and compiled in April, 1911, by Ferriman Dukett. Yerevan, 2009.

Կիլիկիայի կոտորածները» գիրքը¹, որն առաջին անգամ լույս է տեսել 1910 թ. Փարիզում, ինչպես նաև նույն գրքի՝ Վ. Պողոսյանի իրականացրած հայերեն թարգմանությունը²: Հեղինակը, օգտագործելով իրադարձության ժամանակակիցների՝ ամերիկացի, անգլիացի, ֆրանսիացի դիվանագետների և միսիոներների վկայությունները, նկարագրել է 1909 թ. Ադանայի և Հալեպի նահանգներում իրականացված հայկական կոտորածները և վերլուծել դրանց դրդապատճառները:

ՀՅԹԻ-ի թողարկած «Վերապրողի հիշատակարան» մատենաշարը համալրած հուշագրությունները Հայոց ցեղասպանության իրողությունը փաստող կարևոր վկայություններ են: 2010 թ. լույս տեսած Հովհաննես Կարապետյանի (Օննիկ Յուսուֆ) հուշագրությունը, որը հրատարակության է պատրաստել բանասիրական գիտությունների թեկնածու Վլադիմիր Մադայանը, Հայոց մեծ եղեռնից հրաշքով փրկված և հետագայում Հայաստանում հաստատված հեղինակի կյանքի պատմությունն է³: Նա ներկայացրել է իր ծննդավայր Ադաբազարի հայության կյանքը, 1915 թ. տեղահանությունների ու կոտորածների դաժան դրվագները:

2012 թ. ռուսերեն թարգմանությամբ լույս տեսավ արվեստագետ Մարգարիտ Աճեմյան-Անիերթի «Դռան թակոցը» հուշագրությունը⁴: Գրքի հիմքում խարսխված են հեղինակի մոր՝ 1900 թ. Ամասիա քաղաքում ծնված Էսթեր Միներաճյանի հուշերը 1915 թ. Մեծ եղեռնի և դրա պատճառած տառապանքների մասին: Ի դեպ, 2007 թ. ԱՄՆ-ում անգլերեն լույս տեսած այս գիրքը 2008 թ. Նյու Յորքի Գրքի տոնավաճառի՝ «Լավագույն պատմական հուշագրություն» անվանակարգում արժանացել է հաղթողի կոչման: Մեծ եղեռնը վերապրածի այս հուշագրությունը «Հայ օգնության ֆոնդի» նախաձեռնությամբ ու հովանավորությամբ թարգմանվել է և տպագրվել նաև հայերեն⁵:

Հրատարակված հուշագրությունների շարքում առանձնանում է Լիլիթ Թուրխալյանի՝ անգլերեն բնագրից հայերեն թարգմանությամբ լույս ընծայած օսմանյան բանակի հայազգի սպա Մարգիս Թորոսյանի հուշագրությունը, որն Օսմանյան կայսրությանը բացառիկ ծառայություններ մատուցած հայազգի սպայի կյանքի ողիսականն է⁶: Ի դեպ, նույն տարում այս հուշագրությունը տպագրվել է նաև թուրքերեն:

2013 թ. ՀՅԹԻ-ն անգլերեն և ռուսերեն վերահրատարակել է նաև մեկ այլ բացառիկ հուշագրություն՝ «Հոշոտված Հայաստան» խորագրով, որը Հայոց ցեղասպանությունը վերապրած չմշկածագցի Արշալույս (հետագայում՝

¹ Տե՛ս **Adossidès A.**, Arméniens et Jeunes-Turcs. Les massacres de Cilicie, Erevan, 2011:

² Տե՛ս **Ադասիդես Ա.**, Հայեր և երիտթուրքեր. Կիլիկիայի կոտորածները, Երևան, 2012:

³ Տե՛ս **Կարապետյան Հ.** (Օննիկ Յուսուֆ), Վերածնված կյանք մը. երևակայական և իրական սարսափների արանքում, Երևան, 2010:

⁴ Տե՛ս **Աճեմյան-Աներթ Մ.**, Стук в дверь. Путешествие сквозь тьму геноцида армян, Ереван, 2012:

⁵ Տե՛ս **Աճեմյան-Անիերթ Մ.**, Դռան թակոցը: Ճամփորդություն Հայոց ցեղասպանության խավարի միջով: (Հուշեր), Երևան, 2009:

⁶ Տե՛ս **Թորոսյան Ա.**, Դարդանելից մինչև Պաղեստին, Երևան, 2012:

Ավրորա) Մարդիգանյանի կյանքի իրական պատմությունն է¹: Հրաշքով փրկվելով կոտորածներից և գաղթի երկար ճանապարհ անցնելուց հետո՝ 14-ամյա աղջնակն ի վերջո ապաստանել է ԱՄՆ-ում, ուր և հետագայում գրի է առել իր կյանքի սարսափելի ու ցնցող պատմությունը: Նշենք, որ այս հուշագրության հիման վրա 1918 թ. ԱՄՆ-ում նկարահանվել է Հայոց ցեղասպանությանը նվիրված առաջին՝ «Հոգիների աճուրդ» ֆիլմը (ռեժիսոր՝ Օսկար Աֆֆել), որի գլխավոր դերակատարը նույն ինքը՝ Ավրորա Մարդիգանյանն է: Ամենուր բացառիկ հաջողությունների արժանացած ֆիլմը գրաքննության ենթարկվելուց և որոշ տեսարաններ կրճատվելուց հետո այլևս չի ցուցադրվել, իսկ հետագայում անհետացել են նաև ութսունհինգ րոպե տևողությամբ ֆիլմի ինը ժապավենները: 1920-ական թթ.՝ գրաքննության ենթարկվելուց հետո, մի շարք գրադարաններից հանվել է նաև «Հռոտոված Հայաստան» հուշագրությունը:

ՀՅԹԻ-ի «Դիվանագիտական արխիվ» մատենաշարում Արամայիս Բալոյանի աշխատասիրությամբ լույս է տեսել Հայկական հարցին նվիրված Իտալիայի արտաքին գործերի նախարարության դիվանագիտական արխիվի վավերագրերն ամփոփող երկհատոր ժողովածուն²: Առաջին անգամ հայերեն հրատարակված այդ վավերագրերը նոր լույս են սփռում Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության վրա: Այս մատենաշարում կարևոր է նաև 2012 թ. անգլերենով հրատարակված շվեդ ժամանակակից հետազոտող Գորան Գյունների «Հայոց ցեղասպանությունը շվեդների աչքերով» աշխատությունը³: Թե՛ 1894-1896 թթ. համիդյան կոտորածներին և թե՛ Մեծ եղեռնին նվիրված այս գիրքն արժեքավոր է նրանով, որ հեղինակն օգտագործել է մեծ թվով շվեդական սկզբնաղբյուրներ՝ դիվանագիտական գեկուցագրեր, ականատեսների վկայություններ, մամուլի հրապարակումներ:

Հայոց ցեղասպանության ուսումնասիրության համար սկզբնաղբյուրային մեծ արժեք ունեն նաև ականատես միսիոներների վկայությունները: Այս շարքը համալրվել է շվեդուհի միսիոներ Ալմա Յոհանսոնի «Աքսորյալ ժողովուրդ. մի տարի հայոց պատմությունից» եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հուշագրությամբ⁴: Լինելով օտարերկրացի ականատես՝ հեղինակն անաչառորեն ներկայացրել է 1915 թ. իրադարձությունները Մուշում, որտեղ գտնվել է 1901-1915 թթ.: Նրա հուշերը հայերեն և ռուսերեն հրատարակվել են առաջին անգամ: 2011 թ. գերմաներեն բնագրից՝ Աշոտ Հայրունու, Հայկ Մարտիրոսյանի և Արամ Միրզոյանի թարգմանությամբ լույս տեսավ շվեդարացի միսիոներ, Հայոց ցեղասպանության ականատես Յակոբ Կյունցլերի

¹ Տե՛ս **Mardiganian A.**, Ravished Armenia, Yerevan, 2013; Растерзанная Армения. История Авроры Мартиканян, Ереван, 2013.

² Իտալիայի արտաքին գործերի նախարարության պատմական դիվանագիտական արխիվի վավերագրերը Հայկական հարցի մասին 1913-1923 թթ., հ. Ա, 1913-1917, Երևան, 2008; հ. Բ, 1918-1923, Երևան, 2010:

³ Տե՛ս **Gunner G.**, Genocide of Armenians. Through Swedish Eyes, Yerevan, 2013:

⁴ Տե՛ս **Յոհանսոն Ա.**, Աքսորյալ ժողովուրդ. մի տարի հայոց պատմությունից, Երևան, 2008:

մենագրությունը¹, որտեղ մանրամասն նկարագրվում են Ուրֆայում տեղի ունեցած հերոսամարտն ու հայ բնակչության կոտորածները: Միսիոներական վկայությունների շարքը 2012 թ. համալրվել է նաև ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ անգլերեն բնագրից հայերեն թարգմանությամբ (թարգմանիչներ՝ Խաժակ Դրամվյան, Անժելա Ղասաբյան) լույս տեսած ամերիկյան միսիոներուհի Կլարա Բարտոնի գրքով²: Նույն տարում ՀՅԹԻ-ն վերահրատարակեց նաև գրքի անգլերեն բնագիրը³: «Ամերիկյան Կարմիր խաչ» կազմակերպության հիմնադիր և նախագահ Կլարա Բարտոնի կազմակերպած նպաստամատույց առաքելության զեկույցը 1895-1896 թթ. համիդյան կոտորածներից տուժած հայ բնակչությանն օգնություն տրամադրելու մասին է: Այս գիրքը չափազանց կարևոր տեղեկություններ է պարունակում նրա գլխավորությամբ իրականացված մարդասիրական առաքելության չորս արշավախմբի գործունեության մասին, մանրամասնորեն ներկայացնում կոտորածներից փրկված հայերին օգնություն ցուցաբերելու դժվարին գործի կազմակերպումը:

ՀՅԹԻ-ի հրատարակած ուսումնասիրությունների շարքում առանձնանում է Կալիֆոռնիայի համալսարանի դասախոս Ռուբինա Փիրույանի «Եվ նրանք, ովքեր շարունակում են ապրել Թուրքիայում 1915 թվականից հետո» հետազոտությունը⁴: Գրքում ուսումնասիրվում են Հայոց ցեղասպանությունից հետո Թուրքիայում ապրող հայերի ինքնության հարցերը, որոնք ներկայացված են թուրք գրողների ստեղծագործություններում: Առանձնապես հետաքրքրական են այն թուրք հեղինակների պատմությունները, որոնց նախնիները եղել են հայեր: 2012 թ. լույս տեսած Ռ. Փիրույանի մեկ այլ՝ «Հայոց ցեղասպանությունը գրականության մեջ» աշխատությունը կարևոր ներդրում է Հայոց ցեղասպանության դատապարտմանն ուղղված պայքարում⁵: Գրքում նկարագրվում է Հայոց ցեղասպանությունը վերապրած հայի հոգեկան վիճակը, սոսկալի տառապանքները, որոնք անդառնալի դրոշմ են թողել նրա և սերունդների վրա:

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում 2009 թ. հրատարակված ՀՅԹԻ-ի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր Հայկ Դեմոյանի՝ Օսմանյան կայսրությունում հայկական սպորտին և մարմնակրթությանը նվիրված պատկերազարդ գիրքը⁶, որտեղ առաջին անգամ համադրվում են և ներկայացվում Օսմանյան կայսրությունում հայկական սպորտի, մարմնակրթու-

¹ Տե՛ս **Կյունցլեր Յ.**, Արյան և արցունքների երկրում. իրադարձությունները Միջագետքում Համաշխարհային պատերազմի ժամանակ, Երևան, 2011:

² Տե՛ս **Բարտոն Կ.**, Ամերիկյան Կարմիր խաչի նպաստամատույց առաքելությունը Փոքր Ասիա, Երևան, 2012:

³ Տե՛ս **Barton C.**, Expedition in Asia Minor and Relief Operation, Yerevan, 2012:

⁴ Տե՛ս **Peroomian R.**, And Those Who Continued Living in Turkey after 1915, Yerevan, 2008:

⁵ Տե՛ս **Peroomian R.**, The Armenian Genocide in Literature, Yerevan, 2012:

⁶ Տե՛ս **Դեմոյան Հ.**, Հայկական սպորտը և մարմնակրթությունը Օսմանյան կայսրությունում, Երևան, 2009:

թյան ձևավորման, զարգացման ընթացքն ու առաջին հայ մարմնամարզական ակումբների գործունեությունը: Հրատարակությունն ընթերցողին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու հայկական սպորտի պատմության, ինչպես նաև թուրքական ազգայնականության ցայսօր անհայտ որոշ դրվագների:

ՀՅԹԻ-ի աշխատանքների շարքում կարևոր տեղ է գրավում նաև Օսմանյան կայսրությունում քրիստոնյա այլ ժողովուրդների ցեղասպանությունների պատմության ուսումնասիրությունը: Պատմական գիտությունների թեկնածու Գևորգ Վարդանյանի լույս ընծայած մենագրությունը նվիրված է Օսմանյան կայսրությունում հույն բնակչության կարգավիճակի և 1914-1923 թթ. հույների ցեղասպանության ուսումնասիրությանը¹: Հեղինակը գուգահեռներ է անցկացնում հայերի և հույների ցեղասպանությունների պատճառների և իրականացման մեխանիզմների միջև:

Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և դրա հետևանքներին առնչվող պայքարում կարևոր ներդրում է թուրքագետ, պատմական գիտությունների թեկնածու Մելինե Անումյանի մենագրությունը², որը նվիրված է 1919-1921 թթ. Օսմանյան կայսրության ռազմական արտակարգ ատյաններում հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով հարուցված դատական գործերի և 1926 թ. Թուրքիայի Հանրապետության անկախ դատարաններում կայացած երիտթուրքերի դատավարությունների ուսումնասիրությանը:

Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ մղվող պայքարում մեծ կարևորություն ունի 2012 թ. հրատարակված՝ Հայոց ցեղասպանությունը վերապրածի ժառանգ Տիգրան Քալայջյանի «Ճշմարտության պաշտպանը. Գուրգեն Յանիկյանը և Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ պայքարը» աշխատությունը³:

2013 թ. ՀՅԹԻ-ն հրատարակեց «Ցեղասպանագիտական հանդես» գիտական նոր ամսագրի առաջին համարը, որն ամփոփում է 1909 թ. կիլիկյան կոտորածների հարյուրամյակի առնչությամբ 2009 թ. ապրիլին Երևանում գումարված միջազգային գիտաժողովի նյութերը: Հեղինակների թվում են ոչ միայն հայրենական, այլև արտասահմանյան պատմաբաններ Ֆրանսիայից, ԱՄՆ-ից, Ավստրալիայից, Հունգարիայից, Սիրիայից, այդ թվում հայտնի մասնագետներ, ինչպիսիք են Իվ Տերնոնը, Ռայմոնդ Հ. Գևորգյանը:

ՀՅԹԻ-ի աշխատակիցները շարունակում են իրենց ուսումնասիրությունները թե՛ նշված և թե՛ ցեղասպանագիտության այլ ասպարեզներում:

¹ Տե՛ս **Վարդանյան Գ.**, Հույն բնակչությունն Օսմանյան կայսրությունում և փոքրասիական աղետը (1914-1923 թթ.), Երևան, 2012:

² Տե՛ս **Անումյան Մ.**, Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. և 1926 թ.), Երևան, 2013:

³ Տե՛ս **Kalaydjian T.**, Sentinel of Truth. Gurgun Yanikian and the Struggle Against the Denial of the Armenian Genocide, Yerevan, 2012.

Մեծ եղեռնի հարյուրամյակին ընդառաջ նրանք գիտական հանրության դատին կհանձնեն նոր ուսումնասիրություններ, փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, օտար սկզբնաղբյուրների և արտասահմանյան հեղինակների արժեքավոր գրքերի վերահրատարակություններ: 2013-2014 թթ. ՀՅԹԻ-ը նախատեսում է հրատարակել Հենրի Մորգենթաուի, Ժամանակակից անվանի ցեղասպանագետներ Վահագն Տատրյանի և Թաներ Աքչամի կոթողային աշխատությունները և մի շարք այլ ուսումնասիրություններ: Այս առիթով հրատարակության է պատրաստվում նաև «Հայոց ցեղասպանության հանրագիտարան» ծավալուն հատորը:

ՄԵՂԱ ՊԱՐՄԱՄՅԱՆ